ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25 դեկտեմբերի 2014 թվականի N 122-Ա

<<ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Բաժնետիրական ընկերության մասին>> ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա) ենթակետով, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ <<Սյունիք>> մասնաճյուղի 25.12.2014թ.N 01-917 գրության *կարգադրում եմ՝*

1.<<Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում ներհիվանդանոցային վարակների կանխարգելման համար իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված շեղումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների ուսումնասիրման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Գևորգյան Նունե - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Կոզմանով Կառլեն -ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Վահան Աբրահամյան - ՀՀ ԱՆ<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ <<Սյունիք>> մասնաճյուղի տնօրեն/համաձայնությամբ/

Արևիկ Խաչատրյան – ՀՀ ԱՆ<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ <<Սյունիք>> մասնաճյուղի էպիդեմիոլոգ /համաձայնությամբ/

Ալիսա Օհանջանյան - <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ վիրաբուժական բաժանմունքի ավագ բուժքույր /համաձայնությամբ/

Գոռ Շեգունց -<<Գորիսի ԲԿ>>ՓԲԸ վիրաբուժական բաժանմունքի վարիչ

Արթուր Առաքելյան -<<Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի տնօրեն

Ժասմենա Հայրապետյան -<<Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի Բժիշկ-լաբորանտ բիոքիմիկ

Ադելա .Բաղդագուլյան -<<Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի ավագ բուժքույր

Նունե Ավագյան -<<Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի լաբորանտ

2. Հանձնաժողովին՝ կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ 15-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

3.<<Քաջարանի ԲԿ>>ՓԲԸ-ի վիրահատարանի աշխատանքները դադարեցնել մինչև աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը :

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2014թ. դեկտեմբերի 25
ք. Կապան